AMERIABANK

03.03.2023թ.
O.AB.100.12CIB.PIED.0.3774.23

Բենեֆիցիար՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.3774.23

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-23/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցության հայտից բխող՝ Պրինցիպալի՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է Բենեֆիցիարի կողմից կազմակերպված ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-23/5 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 30 օգոստոսի 2023թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (agharibjanyan@mineconomy.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է Պրինցիպալի վերոնշյալ մրցութային հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ameriabank CJSC
2 V. Sargsyan St., Yerevan
0010, Republic of Armenia
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

Digitally signed by
ABELIAN IURI
1405860766
Date: 2023.03.03
11:46:10 AMT